ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2019 թվականի թիվ 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետով՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմը համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել հանձնաժողովին յուրաքանչյուր դեպքի ի հայտ գալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում ուսումնասիրել և ներկայացնել եզրակացություն տվյալ դեպքի վերաբերյալ:
3. Դեպքի առանձնահատկությունից ելնելով հանձնաժողովում ներգրավել այլ ստորաբաժանումների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

05.04.2019

X

2019թ. ապրիլի 5
ք. Իջևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզպետի
05 ապրիլի 2019թ.
թիվ40Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Վաղարշակ Սուքոյան	- Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Վահան Փիրումյան	- Հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ
Ասքանազ Բաբլումյան	- հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ
Հայկ Փաշինյան	- հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ
Վասիլ Գալստյան	- հանձնաժողովի անդամ, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Տավուշի մարզային կենտրոնի պետ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ